Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Անգլերեն

Թեմա՝ Անգլերեն լեզվի միջառարկայական կապերը ուսումնական գործընթացում

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան

Ուսուցիչ՝ Ջեմմա Եդիգարյան

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ1 Միջառարկայական կապերի դասակարգումը……..……5

Գլուխ2……..6

2.1 Միջառարկայական կապերի առանձնահատկություններն ու առավելությունները դասի ժամանակ…….……..……6

2.2Միջառարկայական կապերի տեսակները……..……..……..8

2.3Միջառարկայական կապերի գործառույթները……..……..…..8

Գլուխ 3 Անգլերեն լեզվի միջառարկայական կապը դպրոցական տարբեր առարկաների հետ……..……..……..9

Գլուխ 4 Միջառարկայական կապերի տեղն ու դերը ուսուցման գործընթացում……14

Եզրակացություն……..……..……16

Գրականության ցանկ……..18

Ներածություն

Մեր ժամանակներում կարևոր նշանակություն է ստանում միջառարկայական կապերը օտար լեզվի ուսուցման ժամանակ՝ առարկաների և գիտությունների համագործակցությունը: Օտար լեզվի ուսուցման գործընթացում անհրաժեշտ է կիրառել միջառարկայական կապեր, որոնք անհրաժեշտ պայման են ուսուցման հաջողության համար:

Այսօր սովորողների տեղեկատվական դաշտը շատ լայն է և որպես դրա անխուսափելի հետևանք կարևորվում է օտար լեզվի դերը որպես հաղորդակցման միջոց գիտելիքների որևէ բնագավառում՝ բնագիտության, ֆիզիկայի, գրականության և այլն: Սրա հետ կապված օտար լեզվի ուսուցիչների համար բացվում են անհավատալի հնարավորություններ զուգահեռաբար գիտելիքներ տալու նաև այլ բնագավառներից և բազմակողմանիորեն զարգացնելու սովորողին: Միջառարկայական կապերը կիրառվում են այն ժամանակ, երբ ուսուցիչը իրագործում է այն իր բոլոր տեսակների բազմազանության մեջ:

Միջառարկայական կապերի մասին դեռևս շատ հնում խոսել է Յան Ամոս Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» ստեղծագործության մեջ: Նա նշում է, որ միջառարկայական կապերը, առարկաների փոխկապակցվածությունը սովորեցնում է բացահայտել տվյալ առարկայի և երևույթների միջև եղած կապերը, ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, ցույց տալ թե ինչու դա այլ ձևով հնարավոր չէ: Չէ՞ որ իմանալ ինչ-որ բան, նշանակում է դիտարկել այն փոխկապակցվածության մեջ:

Միջառարկայական կապերի բազմաթիվ սահմանումներ կան: Ըստ Ջոն Լոկի ուսումնական գործընթացում մեկ առարկան պետք է հարստացվի մյուս առարկաների տարրերով: Իսկ Յա. Ա. Կոմենսկին ընդգծում է, միջառարկայական կապերի անհրաժեշտությունը՝ բնության մասին գիտական և ամբողջական պատկերի, իրական գիտելիքների և ճիշտ աշխարհընկալման ձևավորման գործում:

Միջառարկայական կապերը համարվում են դիդակտիկ պայման և միջոց: Նրանք հետապնդում են նպատակ և խնդիրներ, պարունակում են մեթոդներ, միջոցներ, գիտության ուսումնասիրման, գիտելիքների խորացման,ուսումնադաստիարակչական գործընթացի, արդյունավետ իրականացման, գիտական աշխարհայացքի ձևավորման համար:

Կատարված հետազոտության նպատակն է ցույց տալ, որ միջառարկայական կապերի ստեղծումը նպաստում է տվյալ թեմայի հետ կապված գիտելիքների ձևավորմանն ու համակարգմանը, անցածի և անցնելիքի միջև

տրամաբանական կապերի ստեղծմանը, անձի զարգացմանը, որպեսզի դասը հետաքրքրական, ուսանելի և դաստիարակչական դառնա: Միջառարկայական կապերի ստեղծման միջոցով աշակերտների մոտ կզարգանան քննադատական և ստեղծագործական կարողություններ,կդրսևորվեն ճանաչողական, մտահանգման, դիտարկման, երևույթների նկատմամբ հետաքրքրություն և քննադատական մոտեցում, կհամագործակցեն ընկերների հետ, կլսեն խոսակցին, կաշխատեն ընդհանուր նյութերով, կզարգացնեն գեղագիտական ճաշակ:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Թեմայի վերաբերյալ տեսական և գործնական մոտեցումներ:
2. Միջառարկայական կապերի միջոցով միավորել տարբեր առարկաներից ստացված գիտելիքները մի համակարգում, դրանք ամրապնդել և կիրառել:
3. Տրամաբանական կապ ստեղծել անցածի և անցնելիքի միջև:
4. Զարգացնել քննադատական և ստեղծագործական կարողություններ:

Գլուխ 1

1.1 Միջառարկայական կապերի դասակարգումը

Դպրոցում կրթությունն ուղղված է անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանն ու դաստիարակմանը: Կան շատ միջոցներ և մեթոդներ, որոնք նպաստում են օտար լեզվի դասավանդման ժամանակ միջառարկայական կապերին:

Միջառարկայական կապերը ուսումնական գործընթացում իրականացվում է հետևյալ միջոցներով՝

1. Հարցերի շարադրում.
2. Առանձին առաջադրանքների հանձնարարում,
3. Խնդրահարույց իրավիճակների ստեղծում,
4. Ճանաչողական առաջադրանքների կատարում,
5. Փորձարարական, հետազոտական վարժությունների լուծում:

Սրանցից յուրաքանչյուրը խիստ կարևոր դեր ու նշանակություն ունի: Միջառարկայական կապերը դասակարգվում են՝

1. Ըստ բաղադրության՝
    - Բովանդակային տեղեկատվական,
    - Մեթոդական,
    - Կազմակերպչական,
    - Օպերացիոն,
2. Ըստ ուղղվածության՝
    - Միակողմանի
    - Երկկողմանի
    - Բազմակողմանի
3. Ըստ գործառույթների՝
    - Մեթոդական
    - Կրթական (ըմբռնում, համակարգվածություն, ճկունություն)
    - Զարգացնող (հետաքրքրության և ինքնուրույնության ձևավորում)
    - Դաստիարակող

Միջառարկայական կապերի բոլոր գործառույթները և միաժամանակյա կիրառումը հնարավոր է իրականացնել ինտեգրված դասերի միջոցով:

Գլուխ 2

2.1Միջառարկայական կապերի առանձնահատկություններն ու առավելությունները դասի ժամանակ

Ըստ ժամանակային գործոնի միջառարկայական կապերը դասակարգվում են՝

1. Ուղեկցվող կամ հորիզոնական- պայմանավորված են երկու առարկաների համաժամանակյա տեղեկատվական նյութերով:
2. Նախորդող կամ ուղղահայաց- գործադրվում են կարճ, բայց հաջորդական ժամանակաշրջաններում՝ քառորդներ, կիսամյակներ երկու առարկաների տեղեկատվական նյութեր ուսումնասիրելիս:
3. Հեռանկարային- պայմանավորված են մի քանի առարկաների այնպիսի տեղեկատվական նյութով, որ գործում է երկար ժամանակ՝ մեկից երեք տարի:

Միջառարկայական կապերի օգտագործումը իր որոշակի տեղը պետք է ունենա ուսումնական աշխատանքի ընդհանուր համակարգում և նույնիսկ յուրաքանչյուր առանձին նյութի ուսումնասիրության ընթացքում: Դասի ժամանակ միջառարկայական կապերը կարող են օգտագործվել երեք տարբեր պահերի.

1. Ուսումնասիրվող նյութի շուրջ անցկացվող նախապատրաստական զրույցի ընթացքում ուսուցիչը կարող է օգտագործել ուսումնական այլ առարկաների և այլ գիտությունների տվյալները նյութի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում տալու համար, որպեսզի դրանով իսկ հող ստեղծվի բուն նյութի յուրացման համար:
2. Նյութի մշակման ժամանակ, երբ սովորողնրի ընթերցած տեքստի այս կամ այն հատվածի շուրջ ուսուցիչը կամ աշակերտները բացատրություն են տալիս, համեմատում, փաստեր բերում անցյալից հակադրությունանում, զուգահեռներ անցկացնում միտքն ավելի պարզ, մատչելի դարձնելու համար:
3. Ամփոփման ժամանակ, կարելի է կատարել հեռավոր կամ կողմնակի էքսկուրսիա, որը թույլ կտա ազատ դատողություն կատարել առանց հիմնականից շեղվելու: Սա ավելի շատ կատարվում է աշակերտների կողմից:

Ինտեգրված դասերի առավելություններն են՝

- Աշխարհը, որով շրջապատված է երեխան, ճանաչվում է որպես մի ամբողջականություն իր բազմազանության մեջ:

- Մտածողության հզոր խթան է հանդիսանում՝ սովորողները համեմատում, համադրում, վերլուծում են, փնտրում են, ինքնուրույն գտնում իրենց ցանկացածը, զարգացնում են լեզուն, ինքնուրույն եզրակացություն անելու կարողությունը:
- Դասերը ստանդարտ չեն, ինչի հաշվին շատ հրապուրիչ են:
- Դասերի ընթացքում երբեմն նաև գյուտեր ենք անում, սա ինչ-որ առումով նաև գիտական գործունեություն է:
- Այս դասերը նաև բացահայտում են ուսուցչի ստեղծագործական կարողությունը, նոր որակի են բարձրացնում ուսուցչին:

Միջառարկայական կապերը խթան են հանդիսանում է հաղորդակցման և ճանաչողության գործունեության համար, ստեղծում են զարգացման համար լրացուցիչ հնարավորությունները:

Անգլերեն լեզվի ուսուցման համար անհրաժեշտ է, որ սովորողը տարբեր առարկաների գիտելիքների հարուստ պաշար ունենա:

Միջառարկայական կապերը սովորողներին թույլ են տալիս ստանալ աշխարհի մասին առավել ամբողջական պատկերացում, նրան տալիս են լայն հնարավորություն ինքնորոշման համար:



2.2 Միջառարկայական կապերի տեսակները

Բովանդակատեղեկատվական միջառարկայական կապերը բաժանվում են ըստ գիտելիքների կազմի, որն արտացոլված է մաթեմատիկական ծրագրերում փաստերի, տեսական, փիլիսոփայական հասկացություններում: Սրանք այն կապերն են, որ գործ ունեն գիտական փորձերի հետ, մաթեմատիկա, փիլիսոփայություն:

Փաստերի հիման վրա միջառարկայական կապեր. Սա փաստերի նմանության համադրումն է, ընդհանուր փաստերի օգտագործումը քիմիայի, ֆիզիկայի, մաթեմատիկայի դասաժամերին նպատակ ունենալով հարստացնել առանձին երևույթների վերաբերյալ գիտելիքները, օրինակ՝ մաթեմատիկայի և քիմիայի ուսուցման ժամանակ ուսուցիչները կարող են օգտագործել մաթեմատիկան քիմիական նյութերի հատկանիշների հաշվարկման համար:

Հասկացությունների միջառարկայական կապեր. Սա առարկայական հասկացությունների խորացված և լայն ուսումնասիրությունն է:

Տեսական միջառարկայական կապեր- սա ընդհանուր գիտության օրենքների, հիմնական դրույթների զարգացումն է առարկաների ուսումնասիրման ժամանակ՝ նպատակ ունենալով նյութի ամբողջական ըմբռնումը:

2.3 Միջառարկայական կապերի գործառույթները

- Դաստիարակող- ուսուցիչը հիմնվելով այլ առարկայի վրա իրագործում է դաստիարակության կոմպլեքս մոտեցում:
- Կառուցողական-սրա շնորհիվ ուսուցիչը կատարելագործում է ուսումնական նյութի բովանդակությունը, ուսուցման ձևերը և մեթոդները:

Միջառարկայական կապերի իրագործումը պահանջում է դասի համաժամանակյա պլանավորում, դասի և արտադասարանական գործունեություն:

- Մեթոդաբանական- այս գործառույթը կայանում է նրանում, որ միայն նրա հիմքի վրա կարելի է ձևավորել սովորողների տեսողական-նյութական հայացքները բնությանը, նրա ամբողջականության և զարգացման համար:
- Կրթական – սրա շնորհիվ ուսուցիչը ձևավորում է սովորողների գիտելիքների որակը, նրա համակարգվածությունը, խորությունը և ճկունությունը:

Գլուխ 3

Անգլերեն լեզվի միջառարկայական կապը դպրոցական տարբեր առարկաների հետ

3.1 Անգլերեն լեզվի կապը պատմության, հասարակագիտության, հայրենագիտության և համաշխարհային գրականության հետ

Սովորողի հոգեկան զարգացման համար կարևոր գործոն է հանդիսանում դպրոցական կրթության բովանդակության հումանիտարիազացիան: Այս հարցում կարևոր է ազգային մշակույթի, պատմության և հայրենագիտության ուսումնասիրումը, որը անքակտելիորեն կապված է օտար լեզվի ուսուցման հետ: Այն հանդիսանում է օտար մշակույթի հասկանալու բանալին: «Հայրենիք» հասկացությունը սկսվում է տեղանքի պատմությունից. Այսինքն, այն գյուղի կամ քաղաքի պատմությունից որում ապրում ես: Սովորողը պետք է իմանա և հարգի իր ազգային ավանդույթները: Հաճախ օտար լեզվի դասաժամին քննարկելով այս թեման մեզ համար պարզ է դառնում, որ մեր աշակերտները շատ լավ տիրապետում են Անգլիայի և Ամերիկայի մասին մեծ ինֆորմացիային, կարողանում են այն ներկայացնել անգլերեն լեզվով: Ժամանակակից տեխնոլոգիական միջոցները, համացանցը հնարավորություն են ստեղծում հարստացնել մեր գիտելիքները այդ երկրների մասին: Անգլերեն լեզվի դասերին զուգակցելով պատմության, աշխարհագրության ուսումնասիորումը, կիրառելով միջառարկայական կապերը ավելի հեշտ է դառնում հասկանալ օտար երկրի պատմությունը և մշակույթը; Սրան նպաստում է նաև, այն հանգամանքը, որ այժմ սովորողները հնարավորություն ունեն նաև ճամփորդել այլ երկրներով, որը և հեշտացնում է երկրեների մասին դասերի ուսուցումը:

Ամռան ընթացքում մեր դպրոցի աշակերտները նույնիսկ աշխատել են որպես զբոսավարներ արտասահմանյան զբոսաշրջիկների համար, անգլերենով ներկայացրել են մեր գյուղն ու համայնքը, մեր մշակույթն ու կենսակերպը:

3.2 Անգլերեն լեզվի կապը ինֆորմատիկայի, մաթեմատիկայի և ֆիզիկայի հետ

Մեր ժամանակներում անհնար է պատկերացնել կյանքն առանց տեղեկատվական տեխնոլոգիաների և դրա համար անգլերեն լեզվի դասաժամերին համակարգչի դերը, համացանցի օգտագործումը, էլ. փոստի կիրառումը անխուսափելի են: Այս ձևով էլ իրագործվում է ինֆորմատիկայի հետ միջառարկայական կապը: Դպրոցի առջև դրված հիմնական խնդիրն է սովորողներին ծանոթացնել էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի հմտություններին իրենց ապագա մասնագիտության համար և առօրյայում, ցույց տալ այդ տեխնիկայի օգտագործումը կյանքում հստակ իրադրության մեջ: Ինֆորմատիկա առարկան կարծես հանգույց է մաթեմատիկայի, ֆիզիկայի, տնտեսագիտության, ռուսերեն և անգլերեն լեզուների հետ:

Միջառարկայական կապերը գործածվում են ուսուցման մեջ, որպես անձի վրա համակողմանի ազդեցության գործոն, նրա բազմակողմանի զարգացման համար: Անհրաժեշտ է անգլերեն լեզվի դասաժամերին երեխաներին ծանոթացնել Պյութագորասի և Արքիմեդի հետ, հատկապես բնագիտական հոսքում սովորողների համար: Կարելի է այս դասաժամերին ֆիլմերի, սահիկաշարերի, համակարգչի միջոցով ավելի խորը ուսումնասիրել այս թեմաները:

Այսպիսով, ուսուցիչը զուգակցում է իր սովորական դասը ինտեգրմանը, որը աշխատանքը դարձնումէ ավելի հետաքրքիր, արդյունավետ ոչ միայն ուսուցչի, այլ նաև սովորողի համար:

3.3 Անգլերեն լեզվի կապը հայոց լեզվի և գրականության հետ

Անհնար է սովորել անգլերեն առանց զուգահեռ տանելու մեր մայրենի լեզվի հետ:

<u>Քերականություն</u> նոր քերականական նյութ հաղորդելիս ուսուցիչը առաջնահերթ օրինակ է բերում մայրենի լեզվից: Բոլոր լեզուներում էլ կան նույնական հասկացություններ (օրինակ՝ գոյական, բայ, նախադասություն):

<u>Բառապաշար</u> լեզվական միավորների մակարդակում անգլերենը և հայերենը խիստ կապակցված են:

<u>Շարահյուսություն և կետադրություն</u> Անգլերեն լեզվի շարահյուսական կառուցվածքը ուսումնասիրելիս հայ սովորողները երբեք չեն դժվարանում, որովհետև այն շատ նման է հայերենին: Եվ անգլերենում, և հայերենում կան

գոյական, բայ, դերանուն, որոշիչ, լրացումներ և այլն: Կետադրական կանոններն էլ շատ նման են հայերենին:

Թարգմանական վարժություններ կատարելիս սովորողը նույն մտքի տարբեր լեզուներով կրկնության միջոցով կազմում է բառակապակցություններ և նախադասություններ, վերհիշում է՝ արդյո՞ք ճիշտ է կիրառել տվյալ արտահայտությունը, տվյալ խոսքային միջավայրը այլ լեզվով ներկայացնելիս: Օտար և մայրենի լեզվի համադրական ուսուցումը արգասավոր է, քանի որ այս դեպքում մատչելիության սկզբունքը զուգակցվում է գիտկանության սկզբունքին: Լեզվական նշանների բացատրություններն էլ սերտորեն կապվում են իրար տարբեր լեզուների ուսումնասիրության ժամանակ:

Համաշխարհային գրողների ստեղծագործությունների հետ ծանոթացումը, նրանց ստեղծագործությունները կարդալը, թարգմանելը, տեքստերի վերլուծությունը և քննարկումները, ասացվածքների մեջբերումը, գլխավոր իմաստի ձևակերպումները, այս ամենը օտար լեզուն կապում է գրականության հետ:

3.4 Անգլերեն լեզվի միջառարկայական կապը աշխարհագրության հետ

Անհնար է սովորել անգլերեն առանց աշխարհագրության և պատմության միջառարկայական կապի: Այս առարկաների հետ կապը շարունակվում է երկրագիտական բնույթի թեմաների հետ: Սովորողները ծանոթանում են երկրների պատմությանը, աշխարհագրական դիրքին, կլիմային, քաղաքական կառուցվածքին, ուսումնասիրվող լեզվի տնտեսությանը, հասարակական և քաղաքական գործիչների կենսագրությանը, ճանապարհորդների, կոմպոզիտորների, գիտնականների, մարզիկների կյանքին:

Շատ միջառարկայական կապեր կախված են տեքստերի թեմայից: Օրինակ՝ “Animals”, “Ecological problems” թեմաները անցնելիս մենք հենվում ենք բնագիտության, կենդանաբանության և էկոլոգիայի վրա:

Այս դասերը նպաստում են սովորողների ինքնաճանաչողությանը, նրանց բազմակողմանի զարգացմանը: Իհարկե այս դասերը պահանջում են նախօրոք պատրաստվածություն, բայց նրանք շատ հետաքրքիր են սովորողների համար: Այս դասերի նախապատրաստվածությունը սովորողներին դրդում է ինքնուրույն հետազոտության, անհրաժեշտություն է առաջանում աշխատել լրացուցիչ գրականության և այլ ինֆորմացիայի աղբյուրների հետ:

3.5 Անգլերեն լեզվի միջառարկայական կապը երգ-երաժշտության հետ

Դեպի գեղեցիկի աշխարհը երեխաների համար ճանապարհ պետք է հարթել բոլոր միջոցներով, այդ միջոցներից մեկն էլ երգն ու երաժշտությունն է, որը դասը դարձնում է առավել հետաքրքիր և հաճելի: Երաժշտությունը նպաստում է երեխաների բազմակողմանի զարգացմանը և օգնում է ձևավորել այնպիսի հմտություններ, որոնք հետագայում դրական ազդեցություն են թողնում երեխաների դպրոցական ուսումնառության ընթացքի վրա, մասնավորապես՝ լեզուների և ընթերցանության ուսուցման: Անգլերեն լեզվի դասաժամի ընթացքում երաժշտությունը կարող է օգտագործվել որպես հենք որի վրա հետո կձևավորվի ստույգ դասը: Կարելի է դասն ամփոփել երաժշտությամբ, դրանով իսկ ցրելով երեխաների հոգնածությունը, նրանց աշխուժացնելով և ակտիվացնելով: Երգի միջոցով կարելի է սովորել բառապաշար: Օրինակ՝ տարրական դասարաններում աշակերտները շատ ավելի հեշտ են յուրացնում մարմնի մասերը համապատասխան երգի միջոցով:

Երգի շնորհիվ սովորողները սովորում են ճիշտ արտաբերել օտար բառերը: Երաժշտության շնորհիվ դասի ժամանակ ստեղծվում է հաճելի հոգեբանական միջավայր, ծանրաբեռնվածությունը քչանում է, ակտիվանում է լեզվական գործունեությունը, բարձրանում է հուզական տոնուսը, մեծանում է հետաքրքրությունը անգլերեն լեզվի նկատմամբ:

3.6 Անգլերեն լեզվի միջառարկայական կապը կերպարվեստի հետ

Անգլերեն լեզվի այլընտրանքային ուսուցման ձևը առաջնային խնդիրներից է: Ուսուցման հետաքրքիր ձև մշակելով նաև սեր ենք առաջացնում լեզվի նկատմամբ նկարչության միջոցով: Այստեղ մեր նպատակն է այբբենարանի ուսուցումը բառապաշարի զարգացումը երևակայության ստեղագործական մտքի նկարչական հմտությունների կատարելագործումը:

Այդպիսի կապ օրինակ օտար լեզվի և տեխնոլոգիայի, կերպարվեստի միջև: Արվեստով զբաղվելու նպատակը գեղեցիկ և ճիշտ նկարելը չէ միայն, այլ գեղագիտորեն դաստիարակված անհատ լինելն է: Միջառարկայական կապերի ցայտուն օրինակ է անգլերեն լեզվի և նկարչության համագործակցությունը՝ տառուսուցման ժամանակ: Մեր ժամանակներում անհրաժեշտ է օտար լեզվի

իմացությունը, իսկ դրա ուսուցումը առավել հեշտ է վաղ տարիքում: Այդ տարիքում շատ կարևոր և հետաքրքրիր է ստեղծականը. օրինակ սովորողները նկատում են և դրա ընթացքում սովորում անգլերենի այբուբենը: Նկարի հիմք ենք ընդունում անգլերենի որևէ տառ, որն օգտագործելով նկատում ենք որևէ առարկա, կենդանի, որն սկսվում է հենց այդ տառով:



Վերջում երեխաները ոչ միայն կարողանում են տառերը գրել, այլ նաև մի շարք նոր բառեր են սովորում նկարչության միջոցով: Յուրաքանչյուր սովորող վերջում ունենում է իր իսկ ստեղծած պատկերազարդ այբբենարանը:

Գլուխ 4

Միջառարկայական կապերի տեղն ու դերը ուսուցման գործընթացում

Եթե միջառարկայական կապերը հեշտ ու տեղին, չափավոր ու նպատակային չօգտագործվեն, դրանք կարող են դասապրոցեսը խաթարել, դասի բուն նպատակը երկրորդային պլան մղել, դարձնել այն անկարևոր:

Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են, ելակետ ու հիմք են միմյանց համար: Ուստի սովորողներին շրջապատող աշխարհի մասին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկատվություն տալը, այլ գիտելիքնրի հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը, կարևոր նշանակություն ունի սովորողի աշխարհաճանաչողության համար:

Անգլերեն լեզվի դասաժամերին միջառարկայական կապերի գործադրման երեք կարևոր եղանակներ կան.

1. Անդրադարձ կապերի օգտագործման, որն ամենից առաջ կապվում է ներառարկայական կապերի տեղին օգտագործման հետ: Անցած դասերը սովորողի համար պետք է հիմք ծառայի նորի յուրացման համար:
2. Ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումն է ուսուցման պրոցեսում:
3. Այլ գիտությունների տվյալների կիրառումն է;

Եթե ուսուցիչը ցանկանում է իր դասավանդած օտար լեզվի դասը լիարժեք և նպատակային լինի, անհրաժեշտ է դիմել այլ գիտությունների տվյալների ու փաստերի օգտագործմանը, որպեսզի դասը հետաքրքիր, ուսանելի և դաստիարակչական դառնա:

Դյաբուշևա Լ.Դ.-ն իր հոդվածում նշում է, որ ինտեգրված դասը հանդիսանում է միջոց՝ հաղորդակցման հմտությունների զարգացման համար օտար լեզվի դասավանդման շրջանակներում: Դպրոցի արդիականացման ընթացքում կրթության մեջ տեղի են ունենում մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են աշակերտների ազատ դաստիարակությանը, ստեղծագործական հմտությունների

զարգացմանը, ինքնահաստատմանը, ինքնուրույնության զարգացմանը, մրցակցայնությանը:

Օտար լեզուների դասավանդման նպատակը հանդիսանում է հաղորդակցական կարողությունների ձևավորումը, ինչը զուգակցվում է սոցիալ-մշակութային գիտելիքների ձեռքբերմամբ, քանի որ անհնար է պատկերացնել հաղորդակցում առանց հաշվի առնելու սոցիալ-մշակութային առանձնահատկությունները: Ուստի կարելի է եզրակացնել, որ օտար լեզուների ուսուցման մեջ առանձնահատուկ տեղ է գրավում տվյալ ազգի մշակույթի ուսումնասիրությունը:

Օտար լեզվի դասավանդումը բարդ գործընթաց է և պահանջում է ժամանակ, քանի որ սովորողը պետք է զարգացնի ունկնդրական, խոսակցական, ընթերցանական և գրավոր մի շարք հմտություններ: Օտար լեզվի ուսուցումը ինտեգրված համակարգում ուղղված է սովորողների բազմակողմանի զարգացմանը, նրանց ընդհանուր կրթությանը և դաստիարակությանը (սրան հնարավոր է հասնել տարբեր առարկաների ինտեգրման միջոցով): Ինտեգրված դասերը օգնում են սովորողների մոտ ձևավորել շխարհի մեկ ամբողջական պատկեր, որտեղ օտար լեզուն համարվում է հաղորդակցական աշխարհը ճանաչելու միջոց: Ինտեգրված դասերի շնորհիվ միավորվում են մեկ թեմային նվիրված տարբեր առարկաներից գիտելիքների փաթեթները: Սովորողը կիսում է պատասխանատվություն ուսուցչի հետ, քանի որ տեղեկատվության միակ աղբյուրը ուսուցիչը չէ: Ինտեգրված դասերը հզոր խթան են հանդիսանում վերլուծելու, համեմատելու, որոնելու առարկաների և երևույթների կապը: Ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացին բնորոշ է չորս հիմնական գիծ.

1. Աշակերտը և ուսուցիչը համատեղ պլանավորում են ուսումնական ծրագիրը և դրա իրագործման կարգը:
2. Ուսումնառության հիմքը թեմաներն են:
3. Ուսումնառությունը դպրոցում ընթանում է ժողովրդավարական սկզբունքով:
4. Ուսումնական ծրագիրը այլևս կազմված չէ առանձին առարկաներից:

Եզրակացություն

Այսպիսով, ուսուցման մեջ միջառարկայական կապերը հանդես են գալիս որպես դիդակտիկ սկզբունք և որպես պայման ընդգրկում են տարբեր ուսումնական առարկաների նպատակներն ու խնդիրները, բովանդակությունը, մեթոդները, ուսուցման միջոցներն ու ձևերը: Հետևաբար, միջառարկայական կապերը թույլ են տալիս դուրս հանել ուսուցման բովանդակության գլխավոր տարրերը, հասկացությունները, ուսումնական գործընթացի գիտական ընդգրկումները, հնարավորություն են ստեղծում տարբեր առարկաների գիտելիքների կիրառմանը սովորողների աշխատանքային գործունեության մեջ: Համապատասխանաբար, լուծելով խնդիրները, սովորողները իրագործում են բարդ ճանաչողական և վերջնական գործողություններ.

1. Հասկանալով միջառարկայական խնդիրները, գիտակցում են այլ առարկաների, գիտելիքների ներառումը:
2. Ընտրում և կիրառում են այլ առարկաների անհրաժեշտ գիտելիքները:
3. Այն տեղափոխում են ուրիշ, նոր իրադրություն, զուգակցելով միմյանց հետ:
4. Գիտելիքների սինթեզ հասկացությունների, միավորների, չափերի, գործողությունների համադրում;
5. Արդյունքի ստացում, եզրահանգումների հարստացում, հասկացությունների ամրապնդում:

Ընդհանուր առմամբ միջառարկայական կապերի օգտագործումը քանակական խնդիրների ձևով ճանաչողական համակարգային, պրակտիկ գիտելիքները ձևավորում են սովորողների հասկանալու և ըմբռնելու կարողությունը տարբեր առարկաների, գիտելիքների կապը: Սրանում է կայանում անգլերեն լեզվի ուսուցման ամենակարևոր՝ զարգացնող ֆունկցիան: Միջառարկայական կապերը ազդեցություն են թողնում առարկայի կառուցվածքի և բովանդակության վրա: Արդյունքում յուրաքանչյուր ուսումնական առարկա համարվում է որևիցէ այլ միջառարկայական կապի աղբյուր:

Հետևաբար նպատակաուղղված գիտական աշխարհաճանաչումը պահանջում է միջառարկայական կապերի պարտադիր հաշվառում: Այս պայմաններում անգլերենը ամրապնդում է իր կապերը ինչպես բնական գիտությունների, այնպես էլ

հումանիտար առարկաների հետ, բարելավում է գիտելիքի տեղափոխման հմտությունը, նրա օգտագործումը և բազմակողմանի կշռադատումը: Այսպիսով, միջառարկայականությունը դա ուսուցման ժամանակակից սկզբունք է, որը ազդեցություն է թողնում ուսումնական նյութի ընտրության և կառուցվածքի վրա, ուժեղացնելով սովորողների գիտելիքների համակարգայնությունը, ակտիվացնում է ուսուցման մեթոդները, կողմնորոշում է ուսուցման կազմակերպման համակարգային ձևերի կիրառումը՝ ապահովելով ուսումնադաստիարակչական գործընթացի միասնությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յ.Ա, Սահակյան Ա.Ս. «Մանկավարժություն», Երևան 2005
2. Դավթյան Մ., Գրիգորյան Ք. «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ», Երևան 2007
3. Lake K. ''Integrated curriculum'' Washington D.C. U.S Department of Education, 1994
4. Дядюшева Л.П. "Интегрированный урок как средство мотивации обучающихся на уроках иностранного языка"
5. Աստվածատրյան Մ. «Օտար լեզվադասավանդման մեթոդիկա», Երևան 1985
6. Jeanette Altarriba ''An Interdisciplinary approach to foreign Language learning'' University at Albany, 2016